

ԻՐԱՅԻՆ

ԻՐԱՅԻՆ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոգևորից համար՝ Տարեկան 12 ֆր.
» վեցամսեայ՝ 6 ֆր.
(Երեսամսեայ համար՝ (Երկու քիւր վեկ
համար) Տարեկան 12, վեցամսեայ 7 ֆր.
Անդրիկայի » 2.60 տոլ. վեցամս 1.50
ԿԱՆԱԽԻՒՆՆԵՐԻՆ

Համակ դրամ եռայն դրկել հետեւեալ հասցեով

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ, «ԻՐԱՅԻՆ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍՈՒԱ (Պուլկարիա)

Редация на вѣстникъ

Rédaction du journal

„Мравункъ“

„Iravounk“

ВАРНА (България)

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Դանուցման տոյր 20 ամսիւն՝ երե-
կէն աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի:

ՄԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՐԴԱԿԱՆԱՐՆԵՐ

«Իրաւունք»-ի գործակատարու-
թիւնը ստանձնած է Տիար Խո-
վիկ Պետիշիան:

Միացեալ Նահանգաց մէջ «Ի-
րաւունք»-ի բաժանորդագրուի
կամ թերթի ստանալու ուղղող ազգա-
կիւնք դիրքով ձեռնարկ համար կրնան
գլխիկ նսեւ Տիար Խ. Պետիշիանի
ի լովէ՞ն Հետեւեալ հասցեով

Mr H. Bedishian

390 P O Box.

Lowell Mass.

ԹՈՒՐԲ ԻՃԵԱՆՈՒ- ԹԵԱՆ ԱՐՑՈՒՆԲԸ

Թուրք Սուլթանը, Ասպանի-
ն Սամուրը միարիւրս կը ցա-
ւակցին Բէքինի մէջ Գորգուլ քը
րիստոնեայ եւրոպացիներուն հա-
մար եւ խստիւ կը քննադատեն
Չինացիներուն արարքը, մարդ-
կութեան, քաղաքակրթութեան
խորձր գաղափարին հակառակ, ա-
նորձան ու յաւիտենապէս դատա-
պարտելի արարք անուանելով զա-
նի:

Բարիկ Օսմանեան գեապանը՝
հրահանգ կը ստանայ Բէքինի ան-
ցւարձին առթիւ, Թուրք իշ-
խանութեան զգացած խորունկ ցա-
ւը, արգար ու մեծ գայրոյթի հը-
րապարակել միջազգային մամուլին
միջոցաւ, ուր սակայն՝ այդ իշ-
խանութեան տակ գտնուող երկրին
մէջ գործուած ալլազան ու բազ-
մաթիւ կարմիր շահատակութիւն.
նկը ամեն օր կը հրապարակուին
ու կը նշաւակուին:

Թուրք իշխանութիւնն ու մա-
մուր Չինացիին դատապարտելով,
հաւելցնեն թէ՛ այդ զգուանքի եւ
գլխիկի զգացումը բնական է ի-
րենց համար հանգէպ արիւնտ
սեպարաններու, չնորհիւ քաղա-
քակրթութեան առաքինութեանց
որուն ծալրագոյն աստիճանին մէջ
կը գտնուին եղիւր մէկ քառորդ
դարէ ի վեր, Սուլթանի գահակա-
նութեան օրէն: Եւ սակայն
լին տեսներ թէ իրենց ազգային
պատմութեան վերջի քսանհինգ

տարին սմին «տենէ աւելի
հակամարդկային ահաբի երեւոյթ-
ներով եւ անբնական արարքներու
գորշիկ շարքերով լեցուած է:

Ճիշդ տեղը չէ՞ թիւրք իշխա-
նութեան պիտին ու մամուլին եւ
րեսը գործելի սա առածը «Նախ
քու ալքիդ գերանը հանէ, ապա
նորիկ ալքիլն շիշդը»:

Կոկորդիլոսի կեղծ արցունքներ
չեն Բէքինի զոհերուն համար թա-
փուածները, երբ տաղին իրենք՝
իրենց ոտքին տակ այդ զոհերուն
քանի մը հարիւրապատկեր ձգե-
ցին ու կը ձգեն եւ արիւնը ամեն
օր կը վազէ միւսին վայրագութեան
ու քմահաճ բռնակալութեան մը
զոհացումին համար:

Կը գայրանան Չինացաց զէմ,
որոնք իրենց յարկը ոտնձգու-
թեանց դէմ պաշտպանելու համար
կը դարենն, մինչդեռ իրենք, ի-
րենց երկրին ազգաբնակչութեան
ամբողջութիւնը կազմող տարրերը
բնաշինչ կընեն:

Բէքինի կրակին համար ծիծա-
ղելի վայրաստուններ կը փրցեն,
երբ տաղին իրենք՝ իրենց երկիրը
ալլակերպ կրակներու մատնած,
քաղաքներ կը պարպուին ու դիւ-
ղեր կը քանդուին:

Չինաստանի ջարդերը կողքան
ու կը դատապարտեն, մինչդեռ ի-
րենք այդ ջարդերէն անհամեմատ
աւելի ահարկու ջարդեր յաջորդա-
բար ի գործ դրած են, Թունաս-
տան, Լիբանան, Կրետէ, Պուլկա-
րիա, Հայաստան, Մակեդոնիա
եւ Պոլիս, պատմական շատ կարճ
շրջանի մը մէջ ու յաւիտենապէս
դատապարտուած մարդկութեան
քաղաքակրթութ մասն: Եւ այսօր
այդ զոհերուն արեան շատ
թարմ հետքեր կը գտնուին թէ
Բէքինի համար թափած արցունք-
նին կը սրբեն:

Օտարապան Չինացիին արար-
քը մարդկութեան ու քաղաքակր-
թութեան բարձր գաղափարին հա-
կառակ եւ անորձան ըլլալը կը
խոստովանին, եւ չեն մտաբերեր
թէ իրենք՝ նոյն իսկ իրենց ազ-
գակից եւ կրօնակիցներէն եւ մին-
չեւ իսկ զաւակներէն դատապար-
տուած են, անոնց բնորոշագոյն
մասն անթիւ զոհերով մալմ
բանտերը, մահացուցիչ աքսորա-
վայրերը եւ ծովի լողն յատակը
լեցուցած ըլլալուն համար:

Մարդկութեան տանելի վիճակ
չը ստեղծելու սահմանուած քաղա-

քակրթութեան առաքինութեանց
ծալրագոյն աստիճանին հասած
ենք կրտսն՝ մինչդեռ այ-
սօր իրենց աշխարհածանօթ բըռ-
նակալութեանը, բազմատեսակ վայ-
րագութեանը ու բռնաբարու-
թեանցը դէմ տակաւին կը բողո-
քեն Հայի ու Մակեդոնացիին, Ա-
րապի ու Ալպանիացիին, մէկ խօս-
քով իրենց երկրին թէ քրիստոն-
եայ եւ թէ մահմետական տար-
րերը:

Բազմատեսակ սծիրներով դա-
տապարտուած եւ քաղաքակրթու-
թիւնն ու մարդկութիւնը յայտնա-
պէս իր սե գործերովը ուրացող
այդ տիպար իշխանութիւնը երբ
Չինացիին դատաւորը կը դառնայ
միեւնոյն ատեն:

Կը մոռնայ Մոսալի մէջ գոր-
ծալ խժոժութիւնները որով Յու-
նաստանը կորսնցուց:

Չը իշխի Մամուրի եւ Լիբանա-
նի նախնիները, ուր իր հեղինա-
կութիւնը դադարեցաւ:

Չը մտաբերեր Պուլկարիոյ Պաթա-
քի ջարդերը որոնց պատճառաւ իս-
պառ արտաքսուեցաւ այդ երկրէն:

Չը տեսներ Կրետէն ուրկից վա-
նեցին զինքը, արեան հոսումը
դադարեցնելու ու երկիրը լափող
կրակը մարելու համար:

Եւ մօտ չեն այն օրերը որոնց
պէս ցմիշա պիտի ելլեն Հայաստա-
նէն, Մակեդոնիայէն, Ալպանիա-
յէն եւ մինչեւ իսկ իսլամ Արաբիա
յէն ալ միշտ իրենց նոյնօրինակ բար-
բարոսութեանցը համար: Թերեւս
իրենց ցնկաբոնէն ալ այն պատմական
մեծ մայրաքաղաքէն — Բաբելոն-
դիւնէ — որուն սալայատակները
տակաւին երեկ ներկուեցան բը-
նակալութեան անմեղ մասին տրիւ-
նովը:

Ու այն ատեն դառնապարտեալ
Չինացի մալ չպիտի գտնուի ի-
րենց համար կոկորդիլոսի արցունք
ներ թափող:

ՍՈՒՆԻՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՆ

Բարիկ 23 յուլիս 1900

Յուլիս ամիսը քննութիւններու
ժամանակն է: Այսօր մենք պիտի
խօսինք մեր հայրենակիցներէն մի
ոյն յաջող քննութեան մասին:

Անցեալ երեքշաբթի օր իր սօք-
թէօրութեան «Թէզը» անցուց մեր
երիտասարդ հայրենակիցներէն ֆ.
Պուլկարի Ռուբէն Բակրեան:

Շատ սիրուն եւ վաղեմի սովորու-
թիւն մ'է Բարիկի Համալսարանի
ուսանողներուն մէջ, որ երբ իրենց
«Թէզը» անցնելու մօտ լինին, ի-
րենց բարեկամներուն եւ ծանօթնե-
րուն լսել կուտան թէ այսինչ օ-
րը՝ այսինչ ժամուն պիտի պաշտ-
պանեն իրենց «Թէզը»: Բարե-
կամներն ու ծանօթները, հայրե-
նակիցները խմբովին կը լսեն հա-
մալսարան եւ հոն կը գտնեն իրենց
ընկերը Տօքթօրի շորեր հագած եւ
արդէն քանի մը բնիկներով շըր-
ջապատուած: Անցեալ երեքշաբթի
(Յուլիս 17) ժամը 1ին բողոքութիւ
հայ ուսանողներ, բժիշկներ եւ ալ
երիտասարդներ խառնուած էին բը-
ժշկական համալսարանի ընդարձակ
սրահներէ միոյն մէջ. վառվռ ալդ
օրը եւ այդ ժամուն Պ. Բակրե
Ռուբէնեան իր թէզը կանցնէր,
որուն նիւթ ընտրած էր «Թըթ-
ուածնի գործածութիւնը միգային
հիւանդութեանց մէջ»:

Գրիթէ կէս ժամու չափ Գէնիւ,
Ալպերան եւ Պէրժէ բժիշկները
քննադատեցին մեր հայրենակցին
«Թէզը» եւ զինքը բաւական չար-
չարեցին ստարկութիւններով, հար-
ցունեցնելով ու հազարումէկ դժուա-
րութիւններ հանելով երիտասարդ
բժշկի գրուածքին դէմ. ուրախա-
լի էր տեսնել թէ ինչպէս հայ
թիկնածուն ամենուն առարկաւ
թեանց կը պատասխանէր:

Վերջապէս ծերունի նախագահը
բժշկապետ բրօքէսէօր Կիւրեանը
խօսք առաւ եւ գովեց Պ. Բակրե
Ռուբէնեանի թէզը եւ նիստը վեր-
ջացաւ. վայրկեան մը առաջուան
Ռուբէն Բակրեանը այժմ Տօք-
թէօր Ռուբէն Բակրեան շատ
զոհացուցիչ նօթով:

Տօքթ. Ռ. Բակրեանը որոշող

ժամանակամիջոցին (օրինական 5 տարի) աւարտեց իր բժշկական ուսմունքը գոհացուցիչ կերպով, Տօբ. Ռ. Յակոբեան Բարիզի գաղթականութեան յաջողակ բժիշկներէ մին պիտի լինի, արդէն իր թէզը չանցուցած Բարիզի նշանաւոր «բլինիքի» մը բժիշկը նշանակուած է.

Յաջողութիւն մեր երիտասարդ Տօբթեանին:

Ուրախութեամբ կաւետենք թէ Բարիզի սակաւաթիւ նկարչութեան ուսանողներէն, Կ. Պոլսեցի Պ. Արմենակ Ֆրանգլեան որ գեղարուեստից վարժարանին յաջողակ շակերտներէն մին է, ժամանակէ մը ի վեր երգեցողութեան դասեր ալ ստանալով կարողացեր է քանի մը շաբաթներէ հետէ Բարիզի «Ռենէսանս» թատրոնի երգեցիկ խմբի մէջ մտնել, Պ. Ա. Ֆրանգլեան շատ գեղեցիկ ձայն մը ունի. իր Ռենէսանս մտնելը — որ Բարիզի առաջնակարգ թատրոններէ մին է և արթնթիւ մը համար հոն մտնելը չափազանց պատիւ կը բերէ թէ հայ նկարչին և թէ երգչին:

Անգամ մը արդէն մենք գրելու առիթը ունեցած ենք Մշեցի Պ. Տիգրան Դիմաքսեանի մասին, երբ նա գրեթէ մէկ տարի առաջ էքզիպիտէ քոնէ շուէի դռներն իրեն առաջ բանալ տուաւ իր յառաջեւ աշխատութեամբ: Այս ամսու ըսկիզբները այս երիտասարդը իր առաջին տարուան քննութիւններն շատ յաջող կերպով անցուց և մէջէն շատ բարձր նօթեր առաւ:

Ուրախալի է մեր գեղատի հայ բնակիցն յաջողութիւնները, մա-

նաւանդ որ այդ երիտասարդը նիւթական անձուկ դուրսէն մը մէջ կը գտնուի:

Նոյնպէս այդ վարժարանը երկու հայ շրջանաւարտ ևս տուած է Պ. Պ. Սարգիսեան և Նէտուրեան, որոնք չորս տարուան խիստ դժուար և միանգամայն յարատեւ ճիգերէ վերջ յաջողեցան վկայականի արժանանալ զոր կուտայ Ֆրանսայի հանրօգուտ շինութեանց նախարարութիւնը:

Ասոնք հազիւ թէ վարժարանէն դուրս ելած ահա Բարիզի նշանաւոր արուեստագէտներու շարքին մէջ կարեւոր տեղ մը կը բռնեն: Պ. Սարգիսեան իր Բրեթէնէօրնիքու կողմէ Ֆրանսայի Ճարտարագէտներու ընկերութեան ներկայացուելով անոր անդամ բնորոշուած է: Ասկից զատ անգլիական նշաւոր տուն մայր դիմում ըրած է Պ. Սարգիսեանի Արուեստահանգէսին մէջ իր ներկայացուցիչն ըլլալու: Ս. Գ.

ՅԱՅՏԱ ԱՐՈՒԹԻՒՆ

Սալմաստի Հայոց Գրասիրաց ընկերութիւնը հիմնուել է 1886 թւին, Հաֆթան դիւղում, Նպատակն է «Ուսում և Ընթերցասիրութիւն տարածել Սալմաստի հայ ազգաբնակչութեան ազգային դասակարգի մէջ»: Այս նպատակին հասնելու համար, նոյն թվականից բացել է Գրադարան-Ընթերցարան և օգնել է դպրոցական գործի զարգացման, 1897 թվականից, Սալմաստի խժոժութիւնների պատճառով ընկերութիւնն գրեթէ քայքայման հասաւ: Այդ ժամանակներ մասնաւորապէս հալածուած էին երիտասարդներ և գիւղական ուսուցիչներ, և որովհետեւ ընկերութիւնն կողմնած էր դրանցից,

ակամայ անկանոնութեան վիճակէն, թէեւ մի քանի անգամ եւս անգուն փորձեր եղան շարունակելու: Բայց զուր. . . Այս տարի մարտի 1ին Գրասիրաց բուն անդամների հրաւերով, ընկերութեան անդամակցեցին 20ից աւելի երիտասարդներ, որոնք ընդհանուր ժողով գումարելով խնդրելին գործի վարչութիւն:

Վարչութիւնն այժմ հրապարակաւ յայտնում է Ա. 1895-96 թվականին Ռուսաստանում Պ. Խ. Խուսիկեանի և Գ. Մ. Ղազարեանի ջանքով հաւաքուած մօտաւորապէս 200 բուլղին 38 թւին յանձնել է Հաֆթանի գաղտնի վարչութիւն: Բ. Ընկերութեան Գրադարանը այժմ ունի 1000 հատոր գիրք: Ստացուած են լրագիրներ (Ռուսաստանից, Եւրոպայից և Ամերիկայից): Ընթերցարանը բաց է լինում շաբաթը 2 օր. ընթերցանութիւն լինում է ձրի. ընթերցարանից օգտուած են մօտաւորապէս 50 հոգի երկու տեղից էլ:

Գ. Ռուսաստանում Պ. Ա. Ունանովի հովանաւորութեամբ եւ Գ. Մ. Ղազարեանի Խ. Խուսիկեանի եւսման հոգանքով աշխատութեամբ վերակազմուել է ընկերութեան Ռուսաստանի «մօտահարկը» որն ունի 20 անդամներ, Պ. Ա. Ունանովը եւ Խ. Խուսիկեան ընկերութեան պատուոյ անդամ են Ընդունել: Վարչութիւնն հրապարակով իր շնորհակալութիւն յայտնում է վերագրեալներին եւ հրաւիրում է հայրենակից պանդուխտներին հետեւել նրանց բարի օրինակին: Ռուսաստանի մասնաճիւղի դանձապահ է Պ. Խուսիկեան, զի Խուսիկեան (Ն. Նովոգորոտով) Վարչութիւնն նոյնպէս խնդրում Պ. Պ. Խմբագիրներէն, հեղինակներին եւ հրատարակիչներին որ աշակցին Պարսկահայոց մի խումբ:

անկիւնում լոյս տարածող ընկերութեան:

Դիւան Վարչութեան
Քարտուղար Նախագահ
Կ. Պողոսեան Հակալէրեան
12 Յունիս 1900
Հասցէ՝
Հայոց ընթերցարան
Սալմաստ-Հաֆթան
Պարսկաստան

Ա. Զ. Դ
Լոյս տեսաւ Ե. Կ. Պօնառքեանի
ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
Բ. ՏԱՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը պարունակէ հրահանգիչ բարոյական պատմութիւններ, իրագրական տեղեկութիւններ, առողջապահական խորատեսիլ եւ ազգային-պատմական կտորներ, աւելցնելով ալ տղան հասկնալի լեզուով ու սոճով գրուած: Բազմաթիւ տանաւորներ, հանելուկներ եւ առածներ պիտի նախաստեն ընթերցումը տղուն աւելի հետաքրքրական եւ հաճելի ընելու:

Նոր Ընթերցարանի սոյն թ. տարին ալ պիտի գտնէ անտարակոյս այն ընդունելութիւնը, որուն արժանացաւ Ա. տարին:

Գինն է 1 ֆր. գոնէ 20 օրինակ գնորդներու համար 15 0/0 զեղի: Դիմել հետեւեալ հասցէին:

Ծանօթ. — Գլ. տարին լոյս պիտի տեսնէ յառաիկայ Սեպտեմբր ամսոյ սկիզբը:

Հասցէ՝ Ե. Կ. Պօնառքեան
Վաքաւ (Պուլկարիա)

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ

(ՊԱՏԿԵՐ ՍԷ ՏԱՀԱԿԱՑԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ)

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

[4]

Առաջնորդ Հայր Սուրբի կողմէ խմբագրուած հրահանգի մը ու ժամանակացոյցի մը համեմատ, անիկա կ'աւանդէր իր դասերն ու կը կառավարէր իր խնամոց յանձնուած դպրոցը. ու գիւղական այն անշուք վարժարանի մէջ, ներքին բարեկարգութիւնը՝ լարուած ժամացոյցի մը պէս կ'ընթանար:

Գրեթէ երեք տարիներ այսպէս շարունակուեցաւ այդ դպրոցը. ու յետոյ երբ Մօսկովայի քերական, 1876 նոյեմբերի սկիզբները՝ մեր գիւղի սահմաններուն մօտ, քաղքէն վերադարձող համագիւղացիները կողոպտելու համարը տարածուեցաւ գիւղի մէջ, մեր ուսուցիչը, որ, իր մտքի կարողութեան հետ, մարմնական կորովէ ու առնական քաջութենէ ալ զուրկ չէր, ա'դ համարի ձայնը երբ լսեց, պատէն կախուած իր հրացանը անմիջապէս առնելով, գէպի թաւանի տեղը կը վազէ, ու տակաւին գիւղի համարը չը հասած, ինքը մինակ, անվրդով, խուճապ մը առնաւորաբար քիւրդերու վրայ կը յարձակի. պատնէշի տեղ քար մը կ'ընտրէ ու իր հրացանի բերանը ա'յդ գազաններուն ուղղելով, կողոպտուները ետ ալ կը սպառնայ: Սակայն, ա'դ անձնուէր հայ կտորձը. դիւ իր հրացանի բլթակը չը քաշած, կոնակի կ'աղմէն, կնամարդի վատ քիւրդ մը, իր մահացու գընդակով կը վիրաւորէ գ'այն. ու հոն, իր պաշտած հայրենիքի Ս. հողին վրայ, մեր սիրելի ուսուցչի կեանքի թելը խզուելով, անոր կարմիր արիւնի վարդազոյն կայապնեցը՝ Տիգրիսի եզրերը բուսած աշխան տոգոյն ծաղկներն ու տխուղ գալարները

նրկեցնել. ու պատմական ա'դ գտնի տխուր ալիքներու հետ դացին խառնուելու անհամար հայ-կըտրիճներու արեան ովկէանի մէջ, ու իրենց տաք ա'սք գողորշով վրէժ կազապկեն թրջական քնահաճ բռնակալութեան դէմ:

Որչա'ք տխուր ու սրտաճմլիկ էր ա'ն տառաջին տեսարանը, երբ ամբողջ գիւղի համարը հասու ճախդան արտերը, ուր վիրաւոր ինկած էր մեր սիրելի վարժապետը: Ու իր' սրտի վրայ բացուած վէրքէն տա'ք տա'ք արեւը դուրս ցայտելով՝ շուրջանակի կարմիր կը ներկէր: Անոր տարաբաղտ մայրն աւ սգաւոր եօթն քոյրերը, իրենց վիրաւոր մէկ հատիկ սիրելիի շուրջ ընդրած՝ ամբողջ գիւղի ժողովրդեան հետ՝ աղիողորմ լաց ու կոծ կը բառնային: Բաւերը կը պակսին, կատարեալ նկարագրեալ լու այս ամենատխուր տեսարանը, որ իրական տուճով մարմնացումն է: «Մի' լար, սիրելի մայրիկս, կըսէր անիկա իր ինկած տեղէն, «եթէ' անկողինի մէջ պառկած մեռնէի. ա'ն ատեն թո'ղ լայիք ու կոծուէիք, ես իմ պարտականութիւնը կատարելու գիտակցութիւնով կը մեռնիմ: Դուք ան մտքով մը խիթարուէ' որ, քոյ տղան իր ընկերի սիրուն կը մեռնի, ու, ամեն օր, իր խօսքով զատ տուածը, այսօր, գործնապէս կը սորվեցնէ իր սաներուն: Ու դուք ա'լ այնքան յուսահատ մի' կոծէք քոյրերս, եթէ' Ձեր մէկ հատիկ եղբայրը կը մեռնի: մի' յուսահատիք, իմ յիշատակը կենդանի պահելու համար, ջանալէք որ, ձեր վաւակներուն ներշնչէք իմ ըզգացմունքներէս, ու սովորեցնէք անոնց վրէժխնդրը ըլլալ վայրագ քիւրդերէն աս կարմիր արիւնիս համար, եւն, եւն, յուզիք ու լացնող խօսքերով ա'դ երիտասարդ վիրաւորը կը ջանար սրտապնդել իր դժբաղդ մայրն ու սգաւոր եօթն քոյրերը: Ու երբ ա'լ ա'դ ինկած նահատակի տեղի վրայ՝ լացի ու կոծի չափը երթալով կը չափազանցուէր, գիւղի երբ-

տասարդները, իրենց սիրելի ընկերը շալկելով, դէպի գիւղը զինուցին: Հափարի գացող յուրս ժողովուրդը, անոր խեղճուկ մայրն ու եօթն քոյրերը աղիողորմ լացով ու անհասարկ կոծով, ա'դ սիրելի բեռը կրողին կը հետեւէին: Ու անոր տաք վէրքին հոսող կարմիր արեւը, ան'դ տեղ հայրենիքի հողերն ու քարերը կը ներկէին, ու ամեն աչքերէն թափուած արցունքները՝ առուակներ կը ձեւանային:

Երեք օր այդպէս վիրաւոր, իր հօրենական օժախին քով ապրեցաւ մեր քաջ վարժապետը: Երեք օր ետք, երբ Մօսկովայի քրդերը կրկին մեր գիւղի վրայ յարձակուած գործեցին, գիւղացիներու ընդմուտեան վրայ երկուսուէք մէկ քանի հոգի ա'լ մեռան, գիւղի բոլոր բնակիչը պարտաւորեցաւ քաղաքը (Պիթիւ) գալթել, իսկ վիրաւոր վարժապետը՝ իրենցնով խնդրակատարու վանքը տեղափոխուեցան: Հո'ն երկու օր ետք սու հողին յանձնեցին այն ազնիւ երիտասարդի մարմինը: Իր գերեզմանի պաղ քարին վրայ հետեւեալ տողերը քանդակելով «հոս կը ճանգչի այն անձնագործ կտորձ երիտասարդի մարմինն որ իր կեանքը զ'հնց իր ազգակցին ու ընկերի օգտին համար, 1876»:

ՂԱԶԱՐՈՍ Պ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ
(Շաբուհակի)



ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ՆԱՄԱԿ

Շապին Գարահիսարի Աղապարի գիւղէն մասնաւորի մը եկած նա. մակէն հետեւեալը կը քաղենք. որ հայաբնակ տեղերու վիճակին մէկ մանրանկարն է:

«Գիւղին մէջ հակառակ կառա. վարութեան պաշտօնեաներու ներկայութեան. գիւղացիք կը չար. վարունք ցուցնեն. միեւնոյն և վայ. լաւ Մօլլաներու ձեռքին տակ. որոնք են Մօլլախանութի և Մէ. ճիւղէն. կառավարութեան տեղա. կան պաշտօնեաները այդ զոյգ մը հրէշներուն քմահաճոյքին չափ մը սահման մը չը գնելէ զատ, ընդ. հակառակը գիւղացիքն այլ կու. տան անոնց հարստահարութեանց և բռնաբարութեան կրկնակի շա. հատակութիւններուն:

Այս երկուքէն Մօլլա Եղստֆ վերջի ջարդերուն առէն եկեղեցիին առջև կառուածները գրաւած և 3-4 տարիէ ի վեր ուզածին պէս կը ցանէ կը քաղէ իր հաշուին. և եկեղեցին այսպէսով բոլորովին զօրկ մնացած է նիւթական ամեն միջոցներէ: Հակառակ տրուած բողոքներուն և կառավարութեան քով եղած դիմումներուն անկարե. լի եղած է ոչ միայն այդ կարուած ներք ետ առնել այլ մինչև իսկ այդ հողերուն արտադրութեան շատ աննշան մաս մ'ալ իբրև չը. նորձ ձեռք բերել:

Ասկից առաջ գիւղիս մէկ քանի բաղնիքիկ հայերու ծախքովը և քիւղացիին աշխատութեամբ շի. նուած ճամբաներն ու աղբիւրները այդ ժողան այս անգամ իր քմա. հաճախքին համար քանդել տա լով, նոր ճամբաներ բանալ կու. տայ և անտառներ տնկելու կ'ըլլէ. այդ բերտ աշխատութեանց համար միշտ հայերը գործածելով ձրիա. բար, ամեն անոնք որ մերժեն և կամ իրենց տննական զբաղումն. րուն համար չը կրնան մասնակ. ցիլ, այն ատեն Մօլլային կամ. քին համեմատ կառավարութեան կողմէ կը բանտարկուին և մինչև իսկ տուգանքներու կը դատա. պարտուին:

Իսկ գալով միւս հրէշին Մօլլա Մէհմէտի ասոր ալ շահատա. կութիւնները ուրիշ կերպ են:

Հայ ընտանեկան յարկեմու, աղ ջկանց և կանանց պատիւին առա. ջին լինամին է: Մօտ օրերս տա. կաւին կին մը աղջկանը հետ մէկ տեղ իւլամացուց, որուն ամուս. նը քանի մը տարինիւ է ի վեր արտասահման կը գտնուի, օգտը. լելով անոնց թշուառութենէն, օգ. նելու պատրուակու անոնց մօտե. նալէ յետոյ քիչ մը ատեն զանոնք կը խնամէ և կառավարկէ որ իսլա. մանան, սպառնալով, հակառակ պարագային իրենց րրած օգնու. թիւնները պահանջել և զիրոնք հալածանքի ու թշուառութեան մատնել: Հիմա մայր և աղջիկ թը քացած են և կը գտնուին Մօհամ

մէտ Մօլլայի հարէմը, որոնց մին իր տղուն հետ ամուսնացուց իսկ միւսն ալ իր մարդոցմէ միոյն տը. ւաւ:

Այս և այսօրինակ շարագործու. թիւններուն հաշիւն ու տեսակը չկայ որ չը գործէ այդ հրէշը: Գիւղին մէջ ամենուս կրնն ու աղ. ջիկը իրն են. սպառնալիք, բռն. նութիւն և մինչև իսկ սպանու. թիւն ի գործ կը դրուին այդ հը. րէշին կողմէ: Կառավարական պաշ. տօնեաներն ալ կաշառք առնելով կ'օգնեն անոր, այդ մարդուն ա. մին ուզածը ընելու համար:

Ինչ անմեղ աղջիկներ ձեռքերու տակ կը բռնաբարուին, ինչ կի. ներ կանայտուներն զաւակներն մեռ. ցնելու սպառնալիքով:

Ուրիշ առթիւ առելի երկար կը գրիմ:

Տօպրիչի աղջկանց վարժարանի ձե. ւագործներու վիճակահանութեան շա. հող թիւերը:

Շնդ. թիւ	Ձեռ. թիւ	Շնդ. թիւ	Ձեռ. թիւ
12	12	209	5
39	6	214	27
62	37	224	47
63	35	236	46
67	62	262	60
73	51	265	59
76	33	273	52
84	67	281	49
96	38	288	28
115	17	321	32
124	20	347	43
131	45	357	8
138	26	370	58
147	10	374	2
155	29	376	1
159	3	383	42
173	19	415	63
182	9	416	16
192	18	417	25
193	48	432	11
195	39	440	7
199	13	454	56
208	23	498	41
500	15	547	57
504	24	550	14
505	30	554	22
512	4	562	34
514	55	566	53
523	21	570	54
530	31	586	40
534	50	589	44
546	36		

Ի դիմաց հոգաբարձութեան (Կնիք)

Տօպրիչ 9 Եղիս

ԱՅԼ ԵՒ ԱԼՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԳԻՇԵՐԼՆԵՐԸ. — Լոնտոնի մէջ ամեն գիշեր 15,000 է աւելի կի. ներ փողոցէ փողոց կը սլքաւն մին. չիւ առաւօտեան տամը 3. ասոնք զը. րթիւ մեծ մասամբ գինով վիճակի մէջ կը գտնուին և խեղճ մարդիկ շատ դժուարութիւն կը քաշեն ասոնցմէ օ. ձիքներն ազատելու ու ճամբանին շա. րունակելու համար: Լոնտոնի մէջ հան. րակները այն աստիճան ազատ են, որ անցորդ մը մանաւանդ երբ սա ընտա. նիքով միասին է կը բռնեն և խայ. տառակ սպառնալիքներով դրամ կը պահանջեն: Խեղճ անցորդները շատ անգամներ խայնելով և կամ ըն. տանիքներն գայթակղալից տեսարանէ մը խնայելու համար կտոկոկին պա. հանջած դրամը տալ և անին քալել:

Լոնտոնի այս վիճակը հիմա երեսփո. խանական ժողովին մէջ խնդիր ըլլա. լով հարցապնդումներու տեղի տուած է: որուն ի պատասխան ներքին գոր. ծոց նախարարը այդ անբարոյա. կանութիւնը ջնջելու անձեռնահաս ըլ. լալը յայտարարելով, աւելցուցած է

թէ հանրութիւնը ինքը կրնայ այդ շա. րթիւն գարմանը տանիլ:

— ՊԵՏՈՒԱՍՏ ԺԱՆՏԱՏԵՆԴԻ (Թիֆո) ԴԷՄ — Տօքթ. Ռայդ անգ. բժշկական թերթի մը մէջ տեսութիւն մը ընելով ժանտախտի պատուաստին կիրառման վրայ, յայտարարած է թէ մինչև ցարդ տեղի ունեցած փորձերը շատ քաջակե. րական եղած են: Յարգելի տօքթորը կը յարէ թէ Լէտիամիթի պաշարման միջոցին ուր 10529 հոգի կային չը պատուաստուած, ոչ պատուաստեալ. ներէն չէին 389 հոգի բռնուեցան: Իսկ միւսներէն ընդամենը 35 հոգի: Եւ նոյնպէս կանխաւ չը պատուաստուած. ներէն երբ բռնուեցան անոնցմէ 32էն մէկը մեռաւ: Իսկ պատուաստուողնե. րէն 213 մէկը:

— Փոթորիկի մը հետաւորութիւնը հաշուելու համար փայլակին երեւնա. լէն մինչև որոշուեմին լսուիլը, քանի երկվայրկեան որ անցած է պէտք է գաղապարակել 340ով և կունենաք փոթորիկէն ձեղնէ ունեցած հեռաւո. րութիւնը: Զօր օրինակ փայլակին տեսնուելէն մինչև պայթելը եթէ 7 երկվայրկեան անցած է. այդ 340ով բազմապատկելով 2380 թիւը կունե. նանք որ մեզի հոյց կուտայ թէ փո. թորիկը 2380 մէթրո կամ 2 քիլոմէթր 380 մէթրո հեռաւորութիւն ունի:

— Վերջերս Բանաստեղծ հնդիկները Գանտապի ներսերը օգապարկ մը գտած են որուն մէջ երկու մարդու գրական կան եղեր, և ուրիշ մալ. որուն համար կըսուի թէ նշանաւոր Անարէն է: Թէեւ ողջ բայց այնպիսի գէշ վիճակի մը մէջ որ հնդիկներէն խնդրեք է զինքը մեռցնել և իր տան. չանքներուն վերջ մը դնել: Հնդիկնե. րը կատարեք են անոր փափաքը:

— Անգլիոյ մէջ թագուհին խորհրդա. րանի որոշումները ֆրանսերէն լեզուով կը վաւերացնէ և նոյն լեզուով կը խմբագրուին Լորտերու և Երես. փոխանական ժողովներու մէջ փոխա. նակուած թղթակցութիւնները:

— Այժմ Զինի ապստամբներուն գլուխը գանուող և գրեթէ կայսերական իշ. խանութիւնը յափշտակող նշանաւոր Իշխան Դուան, ասկից քսան տարի ա. ռաջ երբ 20 տարեկան երիտասարդ էր Պրիւքսէլ բնակած է, Պէլճիքայի ար. քունիքին հովանաւորութեանը ներքեւ զինուորական կրթութիւն ստանալու համար: Այն ատեն շատ գեղեցիկ կեր. պով կը խօսէր ֆրանսերէնը և փա. փաք կը յայտնէր իր երկիրը օր մը եւրոպականացեալ անանել, մինչդեռ այսօր եւրոպացիները բնաջինջ ընել ուղղորդներուն գլուխը կը գտնուի:

— Սաքաւին կամ Չօքա կղզւոյն մէջ (չը գտնուի Ժայռաղոյն արեւելք ձա. րոնի և Օխոցքի ծովերուն մէջ) ուր կաքտորուին Ռուս դատապարտեալներ, այն տեղի աքսորեալներէն Պօթլէնքօ անուն թիապաւտ մը իր ընկերներէն միոյն հետ վէճի բռնուելով, զայն ըս. պաններ և յետոյ սկսեք է ուսել: Այս վայրագ հրէշը ձերբաւալուելով գրպա. նէն գտնուեք են ընկերովը միսին կը. տորներէն:

ԼՐԱՔԱՂ

Պոլսոյ թերթերուն մէջ կը կար քանք թէ Տ. Սահակ Եպիսկոպոս Խապայեան տակաւին Ատանա կը մնայ: Թէեւ Պատրիարքարանէ արտօնութիւն տրուեք է Սիւսի. տի երթալու ("."): — Պոլսոյ Նպաստից Բանձնաժո. ղով շատ կարեւոր և օգտակար որոշումներ տուած է. Ա. Որբա.

նոցներու և նպաստ ընդունող վար. ժարաններու ուշիմ տղաքներէն մաս մը Պէրութի բժշկական վար. ժարանը գնել, սա պայմանաւ որ արուեստը սովորելէ յետոյ իրենց ծննդավայրը դառնան: Բ. Նոյն. պէս մաս մ'ալ Արմաշու դպրեմուն. քը գնել. հոն իրենց կոչման և փափաքին համեմատ ուսուցչու. թեան, քահանայութեան և կամ վարդապետութեան պատրաստուե. լու համար:

— Պոլսոյ Ղալաթիոյ կեդրոնա. կան վարժարանին մէջ ուսուցիչ պատրաստելու յատուկ դասնթացք մը հաստատելու համար մասնաւոր յանձնաժողով մը կազմուած է:

— Ռօսիա ապահովագրական ընկերութեան, որուն 600 ոսկիի ա պահովագրուած էր Գարակէօմրի. կի եկեղեցին, Կ. Պոլսոյ մասնա. ճիւղը յանձն առեք է փոխան պալ. մանեալ 600 ոսկիի 700 վճարել և միւս կողմէն ալ հաշիւի չը գնել չէնքին ազատած մասերը:

— Կ. Պոլսոյ Պէրպէրեան վար. ժարանը այս տարի 9 րնթացա. ւարտ ևս տուեք է. որով այդ կրթ. թական հաստատութիւնը և իր հիմնադիր տնօրէնը մինչև ցարդ ազգին 135 շրջանաւարտներ տու. ած կըլլան, որոնք մեծ մասամբ հայ նոր սերունդին մէջ լուրջ տեղ մը բռնած են. և թէ այդ հաս. տատութիւնը իբրեւ մասնաւորի սեփականութիւն միակը եղած է իր տեսակին մէջ թէ յարատեւու. թեանը և թէ խղճի մտօք դաստի. արակութիւն տալուն համար:

— Ս. Թարգմանչաց տօնին օրը Սեբաստիոյ բողոքականներու դպ. րոցին մէջ գեղեցիկ հանդէս մը կատարուեք է. հիւպատոսական մարմինը, կառավարական պաշտօ. նեաները ներկայ գտնուած են. այս առթիւ երգեր, ճառեր ըս. ուեք են:

— Վանայ Ալցիլու հովիւ Տ. Ներսէս եպիսկոպոս Սյւրեան ի. մացուցած է Պատրիարքարանի թէ իր սուղջական վիճակը ցարդ փո. փոխութիւն մը կրած չըլլալուն, ձեռք վրայ չը հասած Պոլիս պի. տի դառնայ:

— Գաթաթեմուհիէն Պատրիարքա. րան գրուած է թէ վիճակին շատ մը գիւղերուն եկեղեցիաց մէջ քա. հանայի չգոյութեան պատճառաւ արարողութիւն չը կատարուի և թէ շատ տեղերու ազգայինք բո. լորովին զրկուած են հոգեւորա. կան միաթարութենէ:

— Սեբաստիոյ Ազգային Որբանո. ցին մէջ արհեստի երկու ճիւղեր հաստատուած են, մին կօշկակա. րութիւն, իսկ միւսը տաղձագոր. ծութիւն:

— Վանայ Ազգային վարժարան ներու ընդունութիւնները տեղի ունե. ցեք են մեծ հանգստեանով իներ. կայութեան այցելու հովիւ Սրբա. զանին և կառավարական կարեւոր պաշտօնէից:

ԹԻՒՐԵՒԱ ՆԱԿԱՏԻՍԱԹԸ

Թիւրքիա թարափնտան Պալ-
քան քիւլիւք հիւքիւմէթլերին
պարլամենտի գործը գծնուան եւե-
նի կէօմիւնէթլարիֆիլերին, Եւ-
րոպայի իշխան երկրներէ սեքիզէ
ինքնիւսի հալընը Աթինայի իլթի-
նա իլթիմիշ օլան էրմէնի վէ Ժէօն-
թիւրքլերին օրտաւն տըշարը
չըգարլմասը շարթի իլէ օլապի-
լիլի, Եւրոպայի հիւքիւմէթլերին Պա-
պը Արիտէն պիտիլիմիշ իսէ տէ-
Եւրոպայի տէօվէթիլի բօլիթիքա գա-
չապար իշխան հէր տէօվէթտէ
օլտրպը կիպի քէնտիսիտէտէ պու-
լընան նիգամը էօլլէ քէլֆ իշխան
թէկպոյի իտէմէյէճէկիւնի պիտիլ-
միշ տիլ :

— Միւլթանըն թախթա չըգաը-
դըրն 25 ինճի սէնէյի տէվրիյէսի
միւնտիպէթի իլէ, թէքմիլ իսլամ
ճէմիլէթլերի թարափնտան պիտիլ
հէլլէթ Միւնսպօլտա պուլընտը-
րըմասը իշխան սարայտա չ'ըր-
մապտա օլտըգըրընը վէ պուլնտան
մաւտա Աճէմ Դաշը, Մըրը իսը
տիլի, վէ տաճա պապը Պալքան
հիւքիւմտըրըր տալէթ օլընա-
ճապարը սէօլլէնէկաէ տիլ :

— Պուքէլտէ «Միւնսպօլտըգ
Դաշըրը իսմի իլէ օն պէշ կիւն-
տէ պիլ նէշը օլընան Արիտէթա-
ճա վէ Թիւրքէ պիլ կալէթա
թէկէթ օլընըպ հալթիմա իքիւնճի
նօմէրօտա չգմըշ տըր :
Պալ կալէթա թիւրքիւնըն իս-
կէնէթլերինտէն, գուլըմարընտան
վէ ֆէնտ իտարէսիտէն գուլթիլ
մագ իշխան հէր նէ օլտըր իսէ օլ-
տան մէյտանա աթըլաճապարընը,
վէ վաթանլարընը սարիլ միլլէթլէ
րին ֆէսապըպլարընա մէյտան իթ-
մէյէճէթլերին տէ աթէշի պիլ
լիսան իլէ պէյան իթմէթտէ տիլ :

— «Նօրտ Տայլէ Տայլթուկ» կա-
ղէթաընը պէյանընա նազարէն,
Աւստրիա տէվլէթի քէնտի թի-
ճարէթ վէ բօլիթիքա մէֆտաթ-
լարը իշխան Արիտէթապըր գապի
թիմէթի Էլլէթ օլտըրընը կէօմէթ-
րիլմէթտէ իմիշ :

— Իզմիրտէ վէ Պէրուլթաթի
հուլըրճաթ խաթաթլարը Էլան տէ-
վաթ իթմէթտէ օլտապ, հէման հէր
կիւն վուգաթիլար կէօրիւնէթտէ
տիլ :

— Ճէպէլը Տրիւլտէ գարըրըգ-
լըգլարըն էօնիւնիւ ալմագ վէ Ա-
սարիշի ումուլի սապալմագ ի-
շխան, գալէլէր վէ գարըրըգլար
եւթըրաճաթը գարըրըգլարընը
տըր :

— Պիլթիս վիլայէթիտէ Սա-
սոնա հագըն Տարթիլ վէ կէլիէ
կիւլան (Սասոն էրմէնի գրըկըն
լարընտա խարապ օլմուշ մէշհօր
էրմէնի քէօլլէրի) քէօլլէրիտէ
պուլնտան պէօլլէ միւտիլլէր պու-
լընտըրըմասը իրատէ օլմուշ տըր :

— Հիւնալ չըմէնտըքէրի իշխան
Էտիլիէ վիլայէթի 27-30,000 լի-
րա էօմէյէճէկիւնի վէ Ատանա շէհ-

րի տէ էթրաֆ քէօլլէրի իլէ 3000
լիքա թօփլայաճաթընը պիտիլմիշ-
լէր :

— Թիւրք հիւքիւմէթի սահիլ
գարաթօլլարընըն արթըրըմասընը
գարալաշտըրմըշ օլտապ, պահի-
լէ նէգարէթի տէլլէ տէօրթ քիւ-
չիւկ հարապ սէֆիւնէսի հազըրտա
մագտա տըր :

ՁԻՆ

Ձինին Մոնկոլիա վէ Մանչուր-
իա գըլթալարընտա տիլիլէն սէ-
յահաթտա պուլլընըշ պիլ Էվրօ
բալլընը պէյանընա նազարէն, Ձին-
լիլէր ուղուլն միւտտէթտէն պէրու
հազըրընմագտա իմիշլէր, վէ հաթ
թա Մոնկոլ Բընէսլէրիտէն պի-
րինին Էվրօրտա իքի մապալմաթ
կիւլարը օլտապ, մէգըիլ Բընէսին
հիւսպընա օլտապ պէօլլէթ թօփ-
լար վէ ելէնի սիսթէմ սիւնալար
թէտարիք իթմէթտէ իմիշլէր :

— Բէքինտէն Դանկայա վաթը
օլան պիլ Ձինիլ թիւճարըն իֆա-
տէլլէրինէ նազարէն, Էվրօրտա գա-
տընլար վէ գըզլար աթիլէր թա-
րափընտան սօգալարտա սիւրիւն-
տիւրիլլէրէ վէ Էնվայի ճէֆալար
իլէ թէլլէթ իտիլմիշլէր : Մէգըիլ
թիւճար քի դալէթ միւլթէպըր վէ
Էնիլլէթի պիլիսի օլտըրընը սէօլ-
լէնմէթտէ տիլ, Էվրօրտա ուսուլը
իլէ սիւնալարընը տիլլէրին ճըգ-
տարընը 300,000 քիշի կէօմէթ-
մէթտէ օլտապ, պուլնար հէթ Բէ-
քին էթրափընտա պուլլընմագտա
իմիշլէր :

— Ասիլէրին րիստէթիտէ վէ
հիւքիւմէթի հազըրէ Էլիտէ պու-
լընան Բընէն Դուան, հէր քիմ քի
քէնտիսինէ պիլ Էվրօրտապլարըն պա-
շընը կէթիլլէր իսէ զանիճէ պալս
շիշ ալաճաթընը իլան իթմիշ տիլ :

— Ձին վէ Բուսիա պէյնիտէթի
մուհարէպէ իշխան աթիտէթի հա-
վաթիլլէր ալլընըշ տըր :

Ձինիլլէր թարափընտան թօփա
թաթալապ գապի օլընան Պալ-
կալիլլէնաթ Բուս շէհիլ, թէտարա
Բուսլար թարափընտան կէրի ա-
լընապ Ձինիլլէրտէն 870 քիշի
թէլլէթ օլընըշ վէ 200 քիշիտէ է-
սիլ տիւլմիշ տիլ :

— Բուս օրտուսը Ձինիլլէր Էլի-
նէ կէշմիշ Սաթալին շէհիլիտէ
կէրիլլէ ալմապա մուֆթաթ օլմըշ-
տըր :

— Ձին իմէթաթօրը իքիւնճի
տէֆա օլտապ թէքար Ֆրանսա
րէիսի հիւքիւմէթի Մ. Լապէյէ
միւրաճաթիլա թէվաթիլ օլըն-
մասընը րէճա իթմիշ տիլ :

— Ասիլէր Մանչուրիանըն Մուք
տէն շէհիլլէրին խըրիսթիանաթա
մալսուս մահալինէ հիւքիւմէթի քի-
լիսէտէ իլթիճա իթմիշ խըրիսթի-
անաթը փարշա փարշա խաթապ վէ
պիւնալարտա աթէշէ վէրմիշլէր :
Պու անտէ Բուս գաղաթլարըն հէ-
թիլապ պիլ գաշ խըրիսթիան
գուրթարապիլմիշլէր :

— Ելէնիտէն 60 միսիւնար թէ-
լէթ իտիլմիշ տիլ :

— Դիէն-Ձինին Ձինիլլէրէ մախ
սուս մահալլէրի էճնէպի տակէլլէ-
րի թարափնտան եւթմայա վէրի-
լէրէք քիւլլիլլէթի ագճէ վէ գըլ-
մէթտար Էշեա Էլէ կէլիլլէրիշ
տիլ :

ՄԻՒԹԵՆԵՎՎԻԹԷ

Մըրպ գրալը Ալէքսանտր սա-
րայ գաղընլարընտան տուլ վէ
հաշճա քէնտիսիտէն պէօլլէր օ-
լան Արտաթ Տրապա Մաշինի իլէ
նըշանլարընըն Էվլէթի նիւսիսէ
միլտէ եւթմըշ իտիք : Պու տէֆա
ալտըրըմը մալիմաթա նազարէն
Պէկրաթ Բուս Էլիլիսի Մ. Ման-
սալթօ հէման Ձար նալմընա օլտապ
գրալը թէպրիք իթմիշ վէ օնտան
սօնրաթա մաթաթա գիլարէթլէ ա-
նրտա թէպրիք իթմիշ տիլ :

Հիւքիւմտար ֆաթիլալարընճա
միւնտիպէթիլ աւտ օլընապ
Սիւրպիտաթա խօշնուտըրընը Է-
լէրի կէթիլլէր պու իլտիլմաթ իլք
Էվլէ Բուսիա թարափնտան ալ-
գըշանապ թէպրիք օլընմասընտան
Բուս բօլիթիքաթընը Սիւրպիտաթ
հիւքիւմէթի գիլարտէլլէճէկի զանն ու
իւլիւտ օլընմագտա տըր :

— Պէրլինտէն 23 Բուլիս թարի-
լի իլէ վէրիլլէն պիլ թէլլէկրաֆա
նազարէն Ճարնիտանըն պաղը մա-
հալլէրինտէտէ իրիսթիլալարա-
գարընը հարաքէթլէր կէօրիւնէ-
տէ իմիշ :

ԳՐԱԼ ՈՒՄՊԵՐԹՈ

Տիւն շէհիլմիլ գօնաթուհանէ
լէրինէ վաթը օլմուշ պիլ թէլլէկ-
րաֆա նազարէն, իթալիա Գրալը
Ումպէրթօ ուրուլապ վէֆաթ իթ-
միշ տիլ :

Պու խուսուսաթ թաֆալաթը
լաղըմէ Էլան Էլտէ տէյիլ տիլ :

— Սըրպ գրալընըն քէտէրի սա-
պը գրալ Միլան մալտուլմընըն
մալիւմ օլան մաթաթ իլէ Էվլէնէ-
ճէկիտէն խօշնուտ գալմալապ :
Սըրպ օրտուսընըն ումուլ գօման
տանլըղընտան իսթիֆա իլէ վիլէն-
նայա կիթմիշ տիլ :

— Ֆիլիլլէրն աւալարընտա Ալի-
րիկալար իլէ Էլիլլէր պէյնիտէ
Էլան տէվաթ իտէն միւսաթէլլէր
հագընտա աթիլլէն ալընան հալմաթ
աթիլլէր նազարէն պիլ աթիլիլալը
թէլլէրալ քէնտի Էրքանը հարապ
վէ եւթլէրլէրի իլէ պէրապէր Ֆի-
լիլլէրին Էլիլլէն Էսիլ տիւլմիշ :

— Թրանսպալ մուհարէպէսի
հագընտա Էճնէպի կալէթալարըն-
տա կէօրիւնէն հալաթիլլէրէ նա-
զարէն ինկիլիլլէր վէ Պէրլէր հա-
լա վուրուլմագտա օլտապ, ֆա-
գաթ պու կիւլիլլէրտէ ինկիլիլլէր
Էվլէրիճէ մոտաֆֆաթիլլէթ Էլտէ ի-
տէպիլմիշլէր :

Ինկիլլէրա հարալիլլէր նէգարէ-
թիլլէր թրանսպալ մուհարէպէ-
սի իշխան օլան մէսարիֆ վէ վէրի-
լէն թէլլէթիլաթ հագընտա նէշը
օլընան րէսմի պիլ սթալիսթիլլէր
նալարէն, պու մուհարէպէ պէհէր

ինկիլիլլէր իւլլէրինէ Էրքանը շիլլէն
պիլ վէրիլլէրն արթմասընա սէպէպ
օլմուշ վէ շիմտիլլէր գաթաթ 3000,
գապի օլմագ իւլլէր 44,315 քիշի
կալիպ օլմուշ տըր :

ՁՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱԳՐԱՆԱՆ ՏԱՌԵՐՈՒ
ՅԱԿՈՒ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ճուլէ ամեն լեզուէ տպագ-
րական տառեր մասնաւորապէս Հա-
յերէն եւ թուրքերէն, Էսպան, ան-
թըրիլլէր, գիթ եւ կանիլլէր :
Գիւնըր յոյժ գիւրամատչելի :
Հասցէ՝

Agop Dzerounian
(Bulgaria) Sofia

ԾՈՐՕՒՐԱԾՋԱՆԷ "ՁՕՐԱ"
ԵՐՈՒԱՆԴ ԹԵՐԶԵԱՆ

Իշպու ֆօթօկրաֆիստէ Սաթալ-
լը Ձէլմէտէն Էսիլ Գաղարմա մէյ-
տանընտա Ուլիցա Սապօնա 21
նիւմէրօլա մահալէ նալլ օլընըշ
տըր :

Միւրաճաթ իտէճէք զէվաթը
մէմուլն պրապագ իշխան Էճէն
ֆիլաթալա գալէթ թէմիլ ֆօթօկ-
րաֆիլար Էլիլլէր ուսուլար իլէ չը-
գարլմագտա տըր :

«Չայն Հայրենաս»

Լրագիր Ագգային գրական եւ ֆա-
ղաքական կը հրատարակուի շաբաթ
անգամ մը : Կը պարուհալէ լուրջ յօդ-
ուածներ, ախուլ իւններ եւ Ամերի-
կայի հայ գաղթականութեան խմբին
շահեկան լուրեր ու տեղեկութիւն-
ներ :

Բաժնեգիրն է տարեկան 10 ֆր.
Հասցէ
American Hai Publishing & Co
P. O. Box 379 Worcester Mass.
(U. S. A.)

ԱՁԴ

Գրատանա հետ հաշիւ ունեցող-
ներէն կը խնդրուի որ. միշտ ալ
ամսու վերջ փութան կար-
գադրել եւ չը պարտաւորեցնեն զիս
օրինական միլլցներու գիւնըն :

Ա. Չարպիանկեւան

ՕԹԷԼ ՐՕՏՕՐ

Ֆիլիպէ

Օն սէնէտէն պէրու «Ոթէլ Բը-
լօփիլ» իսթիճար իտուպ, Էգ-
հէրիլլէթ միւլթէրիլլէր խօշնուտ
իթմիշ օլան Աստիլ աղա Սրապ-
եան պու տէֆա «Օթէլ Րօտօր»
նազը օլընըշ օլմալլէ, համիլլէթ-
լիւ միւլթէրիլլէրին իսթաճաթը
իշխան խըտմէթ ու թէմիլլէր մի-
քէմմէլ օլմագ տըր :

ԿԼ ՓՆՏՈՒՈՒԻ Աստուր Թա-
կօբեան անուլ երիտասարդը, 25
տարեկան, վանի Դահապալա գիւ-
ղէն : Պանքայի ցոյցին մեկնած է
Պոլսէն դէպի Եւրոպա : Կը խըն-
դրուի ճանչցողներէ որ հաճին ի-
մացնել իր ուր գտնուիլը իր հօր-
եղոր. թաղէնու Աստուրեանի,
Ուն Վէյտան, Ռուսուլ Գուլպա-
րիա :